ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԴԵՐԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

XX դ. սկզբին Ռուսաստանում առկա տնտեսական ճգնաժամը և քաղաքական տագնապալի կացությունը երկիրը կանգնեցրել էին հեղափոխության նախաշեմին: 1905 թ. հունվարի 9-ին (22) Պետերբուրգում բանվորների խաղաղ ցույցի գնդակահարությամբ սկսվեց Ռուսաստանում բուրժուադեմոկրատական առաջին հեղափոխությունը, որի նպատակն էր տապալել ցարիզմը և երկրում ժողովրդավարական կարգեր հաստատել:

1905–1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությունը բացարձակ միապետության դեմ ուղղված ժողովրդական զանգվածների ամենահզոր շարժումն էր ֆրանսիական 1789 թ. մեծ հեղափոխությունից հետո: Ռուսաստանի մայրաքաղաքում բանվորների նկատմամբ տեղի ունեցած արյունալի սպանդն ալեկոծեց ողջ երկիրը: Ծայր առան զանգվածային շարժումներ: Պայքարի մեջ ընդգրկվեց նաև Անդրկովկասը: Հունվար-փետրվար ամիսներին անընդհատ գործադուլներ էին տեղի ունենում Թիֆլիսում և Բաքվում: Գործադուլների ալիքը հասավ նաև Հայաստան: 1905 թ. մարտին Ալավերդու արհեստանոցների մի խումբ բանվորներ աշխատանքի չներկայացան: Մի քանի օր անց հանքարդյունաբերական ամբողջ շրջանում բռնկվեց ընդհանուր գործադուլ, որին մասնակցում էր շուրջ հազար մարդ: Գործադուլավորները հիմնականում առաջադրել էին տնտեսական պահանջներ: Երկարատև բանակցություններից հետո հանքերի և գործարանների ղեկավարությունը տեղի է տալիս, և բանվորներն անցնում են աշխատանքի: Բանվորական գործադուլներն իրենց ազդեցությունն ունեցան նաև գյուղացիության վրա: Արդեն գարնան-ամռան ամիսներին Հայաստանի մի շարք վայրերում, հատկապես Լոռիում, տեղի ունեցան գյուղացիական ելույթներ: Ապրիլ ամսին գործադուլներ տեղի ունեցան նաև Երևանում: Գործադուլ հայտարարեցին Սառաջևի և Շուստովի գինու ու կոնյակի գործարանների բանվորները: Նրանց պահանջները ևս գերազանցապես տնտեսական էին: Գործադուլը, որ տևեց երկու շաբաթ, ավարտվեց բանվորների առաջադրած պայմանների մասնակի բավարարումով:

Երկրում ծայր առնող հեղափոխական դրտեմարտերը ղեկավարում էին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները:

Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատական շարժումը սկսվել էր տակավին XIX դ. 90-ական թվականներից: Այստեղ մարքսիզմի տարածմանը մեծ չափով նպաստեցին Ռուսաստանի արդյունաբերական վայրերից Անդրկով-

կաս աքսորված ռուս հեղափոխականները: Դեռևս 1897 թ. ստեղծվել էր ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն, իսկ 1901–1902 թթ. հաջորդաբար ստեղծվեցին Բաքվի և Բաթումի կոմիտեները: 1903 թ. մարտի վերջերին Թիֆլիսում տեղի ունեցավ Կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարը, որը հիմք դրեց ՌՍԴԲԿ Կովկասյան միությանը, և որտեղ ընտրվեց նաև ղեկավար օրգան՝ Միութենական կոմիտե: Կովկասյան միութենական կոմիտեում տարբեր ժամանակներ աշխատել են՝ Բ. Կնունյանցը, Մ. Ցխակայան, Ստ. Շահումյանը, Ս. Խանոյանը, Ա. Խումարյանը, Ս. Մուլուկիձեն, Ի. Ստալինը, Ն. Ժորդանիան և ուրիշներ: 1903 թ. վերջերին ստեղծվում է «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը», որն իր գործունեությունն արտասահմանից տեղափոխում է Անդրկովկաս՝ մասնավորապես Բաքու: Այս կուսակցության հիմնադիրներն էին՝ Երվանդ Պալյանը, Դավիթ Անանունը, Բախչի Իշխանյանը, Ալեքսանդր Ռուբենին (Մատուրյանը), Գարեգին Կոզիկյանը և ուրիշներ: Հաշվի առնելով հայ իրականության սպեցիֆիկ պայմանները, կուսակցությունը գտնում էր, որ հայ բանվորության և ազգային ձեռնարկատերերի միջև անտագոնիստական հարաբերություններ չպետք է լինեն և այս սկզբունքով էլ վարում էր իր քաղաքականությունը: Կուսակցության ղեկավար գործիչները թերահավատությամբ էին վերաբերվում հեղափոխության հաղթանակի դեպքում փոքր ազգերի իրավահավասարության մասին արվող հայտարարություններին, ուստի և պնդում էին, որ կուլտուր-ազգային ավտոնոմիան պատնեշ է ծառայելու մեծ պետությունների կողմից բացահայտ կամ գաղտնի կիրառվող ասիմիլատորական քաղաքականության դեմ:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում մայիս ամսին և ամառվա ընթացքում հեղափոխական շարժումները գնալով խորանում էին: Ալավերդում բանվորները դուրս եկան մայիսմեկյան ցույցերի: Ստ. Շահումյանը, որ այդ ժամանակ շրջագայում էր Լոռիում, տեղերում կազմակերպում էր սոցիալ-դեմոկրատական բջիջներ: Եվ Ստ. Շահումյանի հետևողական աշխատանքի շնորհիվ հիմնադրվեց ՌՍԴԲԿ (Բորչալուի) Լոռու գավառական կոմիտեն, որը վերջնականապես ձևավորվեց 1905 թ. օգոստոսին:

1905 թ. մայիսին Ստ. Շահումյանը լինում է նաև Երևանում, որտեղ սոցիալ-դեմոկրատական խմբակների աշխատանքները զգալիորեն աշխուժացել էին: Ընդարձակվել էին կապերը նաև Երևանի նահանգում գործող առանձին խմբակների հետ: Հասունացել էր համաքաղաքային ընդհանուր կազմակերպություն ստեղծելու հարցը, և 1905 թ. մայիսի 12-ին Ստ. Շահումյանը հիմնադրեց ՌՍԴԲԿ Երևանի քաղաքային կոմիտեն:

Հեղափոխական ընդհանուր իրավիճակը հասարակական-քաղաքական շարժման մեջ դրեց նաև երկրամասի վերին խավերին, գործարար շրջաններին և ազատամիտ մտավորականությանը: 1905 թ. գարնանից տեղական մամուլը սկսեց աշխուժորեն քննարկել «Ռուսաստանի ներքին կյանքը նոր հիմքերի վրա վերակենտրոնացնելու» հարցը: Օգտվելով ստեղծված իրադրությունից, 1905 թ. փետրվարի 19-ին իր իրավունքների պահպանով Կովկասում առաջինը հանդես եկավ վրաց ազնվականությունը: Նրանց ներ-

կայացրած հուշագրի բուն ոգին իրենց իրավունքները ռուսական ավատականության արտոնություններին հավասարացնելու ցանկությունն էր: Հետագայում վրաց ազնվականությունը նոր ուղերձներով նաև պահանջում էր համավրացական պատգամավորական ժողովի ընտրություն և երկրում ներքին ինքնավարության հաստատում:

1905 թ. մարտ–ապրիլ ամիսներին հայ ազատամիտ մտավորականությունը և գործարար շրջանները երկու հանրագիր են ներկայացնում Ռուսաստանի նախարարների խորհրդին և Կովկասի փոխարքային: Առաջին հանրագիրը կազմված էր Երևանի հասարակության կողմից: Երկրորդը, որը հեղինակել էին 1905 թ. ապրիլի 3–15-ը Թիֆլիսում կայացած հայաբնակ քսանչորս կենտրոնների ներկայացուցիչները, ավելի նպատակասլաց էր ու բովանդակալից: Ժամանակին այդ ժողովը նույնիսկ համարվել է աշխարհիկ գործերի քննարկմանը նվիրված հայկական առաջին համագումարը: Այս համաժողովին մասնակցել են Երևանի նահանգից՝ Ս. Տիգրանյանը, Հ. Սաղաթելյանը, Ալեքսանդրապոլից՝ Հ. Տեր-Միրաքյանը, Նախիջևանի գավառից՝ Լ. Սարգսյանը, Շուշուց՝ Ա. Մելիք-Ադամյանը, Թիֆլիսից՝ Ա. Բայբուրդյանը, Պ. Ղամբարյանը, Տ. Հովհաննիսյանը, Ս. Քալանթարյանը, Հ. Սպենդիարյանը, Կ. Ատեփանյանը, Ա. Խատիսյանը, Բաքվից՝ Ս. Հարությունյանը, Կ. Խատիսյանը և ուրիշներ: Հանրագրերի գլխավոր ուղղությունը երկրի հասարակական և քաղաքական կյանքի վերակառուցման խնդիրներն էին՝ ժողովրդավարական սկզբունքներով:

Վերոհիշյալ հանրագրերում որպես գլխավոր պահանջ ներկայացված էին նաև հայկական դպրոցների, մշակութային-կրթական հիմնարկությունների, բարեգործական ընկերությունների ու հատկապես հայոց եկեղեցու ինքնուրույնության հարցերը, և այն արտոնությունների վերահաստատումը, որոնք ունեցել էր վերջինս Հայաստանը Ռուսաստանին միանալուց ի վեր:

Հայ ազգային-հեղափոխական կուսակցությունները 1905 թ. նույնպես հանդես եկան Ռուսաստանի հասարակական կարգը վերափոխելու պահանջներով: Հնչակյանները, չնայած համեմատաբար փոքրաթիվ էին, այնուամենայնիվ ակտիվորեն մասնակցում էին բանվորական գործադուլներին և ցույցերին: Նրանք, սակայն, հիմնականում ՌՍԴԲԿ փոքրամասնական թևի կողմնորոշում ունեին:

Տակավին 1904 թ. փետրվար-մարտ ամիսներին Սոֆիայում տեղի ունեցած Դաշնակցության կուսակցության երրորդ համաժողովը, իր գլխավոր նպատակը համարելով արևմտահայության ազատագրությունը, չէր բացառում նաև անհրաժեշտության դեպքում Կովկասում բանվորական շարժումներին մասնակցելու հարցը: Դաշնակցությունն ընդհանրապես Ռուսաստանում գործող բոլոր ձախակողմյան կուսակցությունների հետ քաղաքական միաբանության կողմնակից էր, բայց առանձնապես սերտ էին հարաբերությունները սոցիալիստ-հեղափոխականների (էսէռներ) հետ: Էսէռական կուսակցության հայտի գործիչ, Երևանում ծնված Վ. Լունկևիչը (լեհ) ընկերական ջերմ հարաբերության մեջ էր հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների գործիչների հետ: Նա, որ շատ հաճախ լինում էր արտասահմանում, Երկրորդ ինտերնացիոնալի ղեկավարների ուշադ-

բությունը հրավիրում էր դաշնակցության ունեցած ոչ միայն ազատագրական պայքարի ծրագրերի, այլև սոցիալիստական աշխարհայեցողության վրա: Աստիճանաբար այդպիսի համոզման են գալիս նաև Երկրորդ ինտերնացիոնալի ղեկավարները և պատահական չէ, որ 1907 թ. Շտուտգարդի կոնգրեսում դաշնակցությունը, որպես լիիրավ անդամ, ընդունվում է սոցիալիստական միջազգային ընկերակցության շարքերը:

1905 թ. մայիսին Ժնևում գումարված դաշնակցության կուսակցության խորհուրդը մշակեց Կովկասյան նախագիծը, որն արդեն սկսված հեղափոխության պայմաններում առաջադրում էր ինքնապաշտպանությունից անցնել հեղափոխական գործունեության՝ ներկայացնելով նաև հետևյալ պահանջները.

1. Անդրկովկասի համար՝ դաշնակցային ժողովրդավարական հանրապետություն՝ մնալով ազատ Ռուսաստանի կազմում:

2. Կատարյալ հավասարություն բոլոր ազգերի համար և խոսքի, մամուլի, խղճի, բանվորական միությունների, գործադուլների ազատություն:

3. Անդրկովկասի ինքնապաշտպանության սիստեմը ժողովրդական միլիցիայի կազմակերպումն էր:

4. Հողերի աստիճանական համայնացում, անուղղակի հարկերի վերացում:

5. Սահմանել 8 ժամյա աշխատանքային օր, ինչպես նաև աշխատանքային բորսաներ և այլն:

Հարկավ, այս պահանջների հիմքում Դաշնակցության կուսակցության ժողովրդավարական և սոցիալիստական ծրագրի պահանջներն էին:

Հեղափոխությունը նոր խնդիրներ էր հարուցում ցարական արքունիքի առջև: Փետրվար–մարտ ամիսներին առաջացավ կառավարության «ծայրերկրային» քաղաքականության փոփոխության հարցը[1]: Պետերբուրգի բարձր ատյաններն այլևս նպատակահարմար չէին գտնում անսքող և կոպիտ բռնարարքները, բացահայտ ռուսացման բյուրոկրատական միջոցառումները, որոնք իրականացնում էր կառավարչապետ Դ. Գոլիցինը, և նրա փոխարեն Կովկաս ուղարկվեց կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը՝ արդեն փոխարքայի իրավունքներով:

Այդ նշանակումը մեծ հույսեր առաջացրեց հայ հասարակության շրջաններում: 1905 թ. մարտի 30-ին մայրաքաղաքից Վորոնցով-Դաշկովը հատուկ հեռագիր ուղարկեց Կովկասի բնակչությանը, որտեղ նա հայտարարում էր իր մտադրության մասին՝ երկրամասում զեմստվային հիմնարկություններ հաստատելու, դատարանների վերակազմության, պետական հողերը գյուղական համայնքներին տրամադրելու, հայկական եկեղեցական կալվածքները պետական վարչության տակ առնելու գործը վերանայելու մասին: Հարկավ չէր անտեսվում նաև «անկարգությունները», այսինքն՝ հեղափոխական շարժումները ճնշելու հարցը: Պետերբուրգում Վորոնցով-Դաշկովին այցելեցին այնտեղ բնակվող և Կովկասից մեկնած մի խումբ հայեր, որոնք Ամենայն Հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ շնորհա-

---

[1] Վ. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն, Դ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. Հայաստանի աշխատավորները ցարիզմի դեմ մղած համաժողովրդական պայքարում (1905–1907). Երևան, 1988, էջ 83–85:

վորելով փոխարքային նրանից հայանպաստ մի շարք խոստումներ ստացան: 1905 թ. մայիսի սկզբներին փոխարքան ճանապարհ ընկավ դեպի Կովկաս: Կովկասի նախագոներում նրան աղուհացով դիմավորեցին Նոր Նախիջևանի և Ռոստովի հայ հասարակության ներկայացուցիչները: Փոխարքային հանձնվեց մի ուղերձ, որը պարունակում էր բացառապես ազգային պահանջներ: Ճառով հանդես եկավ երդվյալ հավատարմատար Գ. Զալխուշյանը, որը բավականին համարձակորեն նաև հայտարարեց, որ իրենց միակ պահանջն է հայ մնալ, «դավանել մեր հին կրոնը, սովորել մեր լեզուն»[2]:

Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի ընդունելությունը փոխարքայանիստ Թիֆլիսում շքեղ էր. գնացքը կանգնելուն պես աղուհացով փոխարքային մոտեցավ քաղաքագլուխ Խ. Վերիշյանը և հավուր պատշաճի ճառ արտասանեց: Ճառեր արտասանեցին նաև Թիֆլիսի և Քութայիսի վրաց ազնվականության պարագլուխները: Հունիսի 23-ին Թիֆլիս ժամանեց Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը, որին, հունիսի 26-ին, փոխարքան ընդունեց արտակարգ հանդիսավորությամբ և խոստացավ արագացնել եկեղեցական գույքը վերադարձնելու ու դպրոցները վերաբացելու հրովարտակի արձակումը[3]: 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ II-ը, տեղի տալով փոխարքայի խորհուրդներին, դժկամությամբ ստորագրեց այդ հրովարտակը: Հաջորդ օրերին, թերթերի մեծ մասի էջերը լցվեցին այս հրամանագրի վերաբերյալ դատողություններով, ցանկություններով և բազում շնորհավորանքներով:

Հայ ժողովրդի տարած բարոյական այս հաղթանակի պահին, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում դասակարգային մարտերը շարունակվում էին: 1905 թ. հոկտեմբերին սկսվեց համառուսական քաղաքական գործադուլը. այն սկսեցին Մոսկվայի երկաթուղային բանվորները: Հոկտեմբերյան քաղաքական գործադուլների ալիքը հասավ Անդրկովկաս, այդ թվում՝ Հայաստան: Հոկտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլի երկաթուղային հանգույցում դադարեցին աշխատանքները: Գնացքների երթևեկությունը կանգ առավ նաև Ալեքսանդրապոլ–Կարս, Ալեքսանդրապոլ–Երևան գծամասերում: Կազմակերպվեց գործադուլային կոմիտե, որը բանվորական վերահսկողություն հաստատեց Ալեքսանդրապոլի երկաթուղային ողջ հանգույցի վրա: Հոկտեմբերի 16-ին հրատարակվեց գործադուլային կոմիտեի պրոկլամացիան, որը շեշտված քաղաքական բնույթ ուներ:

Հոկտեմբերյան գործադուլների օրերին Ռուսաստանի շատ կենտրոններում ստեղծվում են բանվորների պատգամավորների սովետներ: Հոկտեմբերի 17-ին գործադուլները, տարածվելով ամբողջ երկրում, դարձան համառուսաստանյան: Այս պայմաններում Նիկոլայ II-ը ստիպված եղավ հրապարակել հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որը հռչակում էր «Քաղաքական ազատությունների անխախտ հիմունքներ, անձի իսկական անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների, միությունների ազատություն»: Մանիֆեստը խոստանում էր գումարել նաև օրենսդիր Դումա:

---

[2] «Մշակ», 1905, № 2:

[3] Է. Կոստանդյան. Մկրտիչ Խրիմյան. Հասարակական-քաղաքական գործունեությունը. Երևան, 2000, էջ 418-419:

Նման Դումայի (խորհրդարանի) հրավիրումն արդեն ապացույց էր այն բանի, որ կառավարությունը հասարակության պահանջներին ընդառաջող ևս մի քայլ էր անում: Թեպետև շատ դանդաղ, այնուամենայնիվ. Ռուսաստանը դառնում էր սահմանադրական միապետություն:

Սակայն գործադուլները երկրում շարունակվում էին. նոյեմբեր ամսին Հայաստանում գործադուլ արեցին Ալավերդու հանքագործները: Հուզումներ եղան նաև Հայաստանում տեղակայված զինվորական կայազորներում: Դեկտեմբերին Մոսկվայում բանվորները զինված ապստամբություն բարձրացրին, որը վերջացավ պարտությամբ: Դրանով էլ ավարտվեց հեղափոխության առաջին շրջանը:

Ցարիզմը, սակայն, ինչպես և պետք էր սպասել, իր դիրքերը հեշտությամբ չէր զիջում: Ծավալվող շարժումների առաջն առնելու համար կառավարական շրջաններում սկսեցին միջոցներ որոնել ժողովրդի ուժերը մասնատելու ուղղությամբ: Իշխանությունները չէին խորշում դիմելու այնպիսի ստոր քայլերի, ինչպիսին տարբեր ժողովուրդների միջև կրոնական և ազգային թշնամանք բորբոքելն էր: Անդրկովկասում այդ քաղաքականությունն ուղղվում էր հայերի և ադրբեջանցիների (թաթարների) դեմ: Եվ իշխանությունները հասան իրենց նպատակին. 1905 թ. փետրվարի 6-ին տեղական իշխանությունների և հատկապես Բաքվի նահանգապետ Մ. Նակաշիձեի հրահրումով, մի քանի օր անընդհատ տեղի ունեցան հայ-ադրբեջանական ընդհարումներ: Սակայն չարիքը միայն Բաքվով չսահմանափակվեց, այդ դեպքերը ազդանշան եղան Անդրկովկասի մյուս վայրերի համար: Իշխանության թույլտվությամբ սանձազերծված ազգայնական տարրերը, որոնց ուղղորդում էին նաև համաիսլամական նկրտումներ ունեցող ադրբեջանական բուրժուազիայի և կալվածատիրության ամենառեակցիոն ներկայացուցիչները, ձգտում էին կոտորածների նոր օջախներ ստեղծել[4]: Ադրբեջանցիների միջավայրում բռնկված հակահայկական մոլուցքի պայմաններում, իրենց «առաջնորդների» հեղինակությունն անվերապահորեն ընդունող հետամնաց խավերը հեշտությամբ էին ենթարկվում հարևանների վրա հարձակվելու կոչերին, մանավանդ, որ վերջիններիս հրապուրում էր նաև հայերի ունեցվածքը թալանելու վարդագույն հեռանկարը: Խաղաղ աշխատանքով զբաղված հայ բնակչությունն ընդհարումների առաջին օրերին անակնկալի եկավ և բավականին զոհեր տվեց: Հետագայում միայն հայերը նշանավոր հայդուկապետ Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) գլխավորությամբ կազմակերպվեցին և հակառակորդին զգալի կորուստներ պատճառեցին:

Փետրվարի 18-ին ընդհարումներ սկսվեցին Երևանում, որին անմիջապես արձագանքեց Նախիջևանը, որոշ ընդհատումից հետո ընդհարումները Երևանում կրկնվեցին մայիսի վերջերին և ապա՝ սեպտեմբերին[5]: Կատաղի ընդհարումներ եղան Գանձակի դավառում և ընդհանրապես այն վայրերում, ուր հայ և ադրբեջանցի բնակչությունը շերտ ընդ մեջ էր

---

[4] Թ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Թաթարական ազգաբնակչության ազգայնական դրսևորումները Անդրկովկասում XX դ. սկզբին.– «Բանբեր Երևանի համալսարանի», 2000, № 3, էջ 89–97:

[5] Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Ազատագրական պայքարի ուղիներում. գիրք 1, Երևան, 2003, էջ 235–239:

բնակվում: Օգոստոսի կեսերին սկսված Շուշվա կոտորածին արձագանքեց Բաքուն, որտեղ ընդհարումներն ուղեկցվում էին հայերին պատկանող նավթահանքերի և նավթագործարանների հրդեհումով: Հոկտեմբերի 17-ի մանիֆեստն առիթ դարձավ, որ ցարիզմն իր դիվային ուժերը նորից գործի դնի: Հոկտեմբերի 20-ին Բաքվում սկսվեց, ապա Վրաստանում ու Հայաստանում տարածվեց ջարդերի ու կոտորածների նոր ալիք: Նոյեմբերի 18–23-ը ընդհարումներ եղան Գանձակում, նոյեմբերի 22-ին՝ Թիֆլիսում, դեկտեմբերին՝ Հայաստանի գավառներում:

Կառավարական սադրանքը պարարտ հող էր ադրբեջանական մութ զանգվածների ազգայնական կրքերը բորբոքելու համար: Փոխարքայի հովանավորությամբ Գանձակի և Բաքվի նահանգներում ադրբեջանական բեկերը ստեղծեցին «Դեֆայի» («Պաշտպանություն») կազմակերպությունը, որը կոտորածներ, սպանություններ ձեռնարկելուն զուգընթաց մահասարսուռ թռուցիկներ էր տարածում լուսնի վրա խաչվող երկու դաշյունների կնիքով: Նրանց օրինակով Երևանի նահանգում գործում էր «Ջանբազարների» կազմակերպությունը: 1906 թ. ևս արյունալի ընդհարումները շարունակվում էին. մինչև սեպտեմբեր ամիսը հայկական բնակավայրերում լսվում էր զարհուրելի «Կարմիր քրքիջը»: Կովկասյան իշխանությունները, տեսնելով, որ երկրամասում դրությունը ապակայունացնելու անհրաժեշտություն այլևս չկա, դադարեցրին ընդհարումները:

Հայ ժողովրդի ինքնապաշտպանությունն այդ ծանր օրերին գերազանցապես իրենց վրա էին վերցրել Դաշնակցություն, ինչպես նաև Հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները: Դաշնակցության նշանավոր հայդուկներ Նիկոլ Դումանը, Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Համազասպը (Սրվանձտյան), Քեռին (Արշակ Գաֆաֆյան), Սաքոն, Դրոն, Խեչոն, Ռաշիդը, Մուրադը, Սեպուհը, Առաքելը, Ավոն, Առյուծ-Ավադը, Կոփեցի Մուշեղը և ուրիշներ: Այս հերոսների թվում շատ էին նաև արևմտահայերը: Ինքնապաշտպանության կազմակերպման կենտրոնական դեմքը Ռոստոմն էր: Կովկասահայ և արևմտահայ ֆիդայիներին միավորել էր արյան կանչը, համազգային գաղափարը: Նրանք շատ լավ տեսնում էին, որ հայության երկու հատվածների դեմ, իր վերնախավերի առաջարկությամբ, ոտքի էր կանգնել դեպի Թուրան, դեպի նախնյաց հայրենիքը ձգտող միավորված սպառազեն թրքությունը:

1905–1906 թթ. հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ կովկասյան իշխանությունների կողմից այդ վայրերը գործուղված զինվորական միավորումների, այսպես կոչված, «չեզոք» և «հաշտարար» նպատակները ոչ այլ ինչ էին, եթե ոչ խաբեություն՝ զորամասերի հրամանատարների մեծագույն մասի դիրքորոշումը հակահայկական էր: Չնայած այս «առավելությանը» և այն հանգամանքին, որ հարձակվող ադրբեջանական ջոկատները հնգապատիկ գերազանցում էին հայկականին, ընդհարումները մեծ մասամբ ավարտվում էին հայերի հաղթանակով և, բնական է, որ սպանված ադրբեջանցիների քանակը զգալիորեն շատ էր լինում հայերի զոհերից: Ցարիզմի կազմակերպած արյունոտ այդ խրախճանքի դեմ իրենց ցասման ձայնը բարձրացրին հայ ու ադրբեջանական գրողներ Հովհաննես Թումանյանը, Սաբիրը և ուրիշներ, ինչպես նաև ռուս առաջավոր հասա-

րակության ներկայացուցիչներն ու առաջին հերթին Մաքսիմ Գորկին: Չնայած 1905–1906 թթ. դժոխային ամիսներին և նյութական մեծ վնասներին, որ կրեց արևելահայությունը, այնուամենայնիվ ընդհարումներն ունեցան հոգեբանական առանձնահատուկ նշանակություն. դրանց ընթացքում հաղթահարվեց հայի զոհի բարդույթը: Հայը դարձավ վստահ իր ուժերին. նա այլևս չէր երկնչում իր հարևանից, համոզված էր, որ վերջինիս հարձակման դեպքում համարժեք պատասխանը չի ուշանա:

1905–1906 թթ. արևելահայությունը մարտական դաստիարակություն ստացավ: Այն իր քննությունը բռնեց նաև հետագայում դարավերջին սկսված Ղարաբաղյան ազատամարտի տարիներին[6]: Ազգապահպանության մտահոգություններն էին, որ այդ տարիներին արևելահայությունը, մասնավորապես գյուղական բնակչությունը, հանգեցին այն գործնական եզրակացությանը, որ իրենց բնակավայրերը հնարավորինս պետք է կենտրոնացած լինեն, ուստի և տեղի ունեցան բնակչության ու բնակավայրերի տեղաշարժեր և համախմբում:

Ընդհարումներից հետո հայ հասարակական-քաղաքական շրջանակներում զգուշորեն արծարծվում էր իրատեսական այն միտքը, որ անհրաժեշտ է երկրամասի հայկական բնակավայրերը միավորելով, տարածքային ինքնավարություն ստեղծել և Ռուսաստանի կազմում ունենալ Արևելյան Հայաստան, մի նպատակ, որը մինչև 1905–1906 թթ. հայ հանրության կողմից անտեսվում էր: Հայաստանաստեղծ այս մտայնության յուրատեսակ արտահայտություն դարձավ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կողմից 1906 թ. մայիսի 10-ին հրատարակած կոնդակը, որով հրահանգվում էր օգոստոսի 15-ին Ռուսաստանում ապրող հայ բնակչության կողմից հրավիրել պատգամավորական կենտրոնական ժողով: Ընտրական իրավունք էր վերապահվում 21 տարին լրացած երկսեռ բոլոր ծխականներին, որոնցից 1000-ն ընտրում էր մեկ պատվիրակ: Երկրորդ աստիճանով պատվիրակները միանալով ընտրում էին մեկ պատգամավոր, արդեն 10 հազար ծխականի լիազորությամբ: Նախատեսվում էր ընտրել ընդամենը 60 պատգամավոր: Մրագրվում էր ժողովի նստաշրջանի առաջին քննությանը դնել դպրոցական, տնտեսական և թեմական ժողովները կարգավորելու հարցերը:

Հայկական թերթերի մեծ մասը ողջունեց կաթողիկոսի նախաձեռնությունը, որը բխում էր նաև նրա նախկին հեղափոխականի ըմբռստ ոգուց: Կենտրոնական ժողովի բացումն էջմիածնում նշանակված էր օգոստոսի 15-ին, որը, սակայն, ձգձգվում էր պատգամավորների ժամանակին չհավաքվելու պատճառով: Օգոստոսի 17-ին ժողովը բացվեց 46 պատգամավորների մասնակցությամբ: Մամուլում այն հաճախ համարում էին նաև համագումար, որը պատգամավորների մեծ մասի ցանկությունն էր: Պատգամավորների հավաքատեղի էր նշանակված էջմիածնի ճեմարանի հիվանդանոցի մեծ դահլիճը: Դահլիճի վերին ձախ կողմում դրված էր կաթողիկոսի գահը, աջ կողմում երկու սեղաններ նախագահի և քարտուղարի համար, մի սեղան էլ մամուլի ներկայացուցիչների համար: Հռետորները ե-

---

[6] Գ. Թ ա ր խ ա ն յ ա ն. *1905–1906 թթ. հայ-թաթարական կռիվների պատճառները և ընթացքը (ատենախոսության սեղմագիր). Երևան, 2002, էջ 17:*

լույթ էին ունենում ամբիոնից: Դահլիճի երկայնքով և մեջտեղում շարված աթոռները հատկացվել էին ունկնդիր-պատգամավորներին: Ժողովի նախագահ ընտրվեց Ս. Զավարյանը: Առաջին նիստում արծարծվեց ժողովի ձեռնահասության հարցը. արդյո՞ք այն միայն կենտրոնական ժողով էր, թե՞ սահմանադիր իրավունքներով օժտված համագումար, որը կոչված էր լուծելու արևելահայ իրականության կարևորագույն հարցերը: Այս վերջին տեսակետը պաշտպանում էր ժողովին ներկա դաշնակցականների մեծ մասը, իսկ երիտասարդները (Լ. Աթաբեկյան, Ա. Զիլինգարյան) չէին քաշվում կռնակ դարձնելու եկեղեցուն և հայհոյանքներ թափելու Էջմիածնի ու հոգևորականության հասցեին: Դաշնակցության ավագ սերնդի ներկայացուցիչները, խոսելով ժողովի սահմանադիր լինելու մասին, բնավ չէին բացառում եկեղեցու դերը, այլ դտնում էին, որ վերջինս անհրաժեշտ է, սակայն այն պետք է գառնա կաթողիկոսի գլխավորությամբ ժողովրդի կամքն իրականացնող դործագիր մարմին:

Կովկասյան իշխանության ներկայացուցիչները, որ աչալուրջ հետևում էին ժողովի ընթացքին, սկսեցին անհանդստանալ և հեղափոխական ու սեպարատիստական, ինչպես նաև հակապետական տրամադրություններ նկատելով պատդամավորների ելույթներում՝ Էջմիածնի դավառապետին հանձնարարեցին ցրել ժողովը: Օդոստոսի 30-ին դավառապետը ներկայանալով ժողովականներին՝ պահանջեց 24 ժամվա ընթացքում թողնել Էջմիածնի սահմանները: Զնայած կենտրոնական ժողովից առաջ և դրա ընթացքում քննադատական ելույթներ եղան խիստ պահպանողական որոշ հոգևորականների, հակադաշնակցական տրամադրություններ ունեցող մի շարք ազատական դործիչների, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեծամասնական դործիչների, մասնավորապես Ստ. Շահումյանի ու Ս. Սպանդարյանի կողմից, ժողովի հրավիրումը հայկական պետականության ստեղծման կարևոր փուլերից էր:

Զնայած 1905 թ. Մոսկվայի բանվորների դեկտեմբերյան ապստամբության պարտությանը, այնուամենայնիվ 1906 և մասամբ 1907 թթ. երկրում ժողովրդական հուղումները չէին դադարում: Այդ տարիներին շարունակվում էր նաև դեռևս վերջնականապես չձևավորված քաղաքական որոշ ուժերի կազմակերպական միավորումը: Այսպես, 1906 թ. հունվարի 3-ին Թիֆլիսում հրավիրված հիմնադիր ժողովը ծնունդ տվեց հայկական սահմանադրական-ռամկավար կուսակցությանը, որը պաշտոնապես կոչվեց «Սահմանադիր-դեմոկրատական կուսակցության հայ արմատական ֆրակցիա»: «Մշակ» թերթը դարձավ նոր կազմակերպված կուսակցության օրդանը: Կուսակցության առաջատար դործիչներն էին Հ. Առաքելյանը, Ա. Քալանթարը, Ալ. Արասխանյանը, Ա. Մխիթարյանը, Ս. Հարությունյանը, Լ. Սարդսյանը, Ք. Վերմիշյանը և ուրիշներ: Հայկական այս նոր կուսակցությունը, որին անվանում էին նաև «Մշակ»-ի կուսակցություն, իր դործունեությամբ և խնդիրներով մոտ էր ռուսական «Ժողովրդական աղատություն» (Սահմանադիր ռամկավար) կադետական կուսակցությանը, ուստի և ընդունում էր վերջինիս ծրադրային ընդհանուր սկզբունքները: Դրանք էին՝ Անդրկովկասում մտցնել ինքնավարություն և օրենսդրական իրավունքներով սեյմ, հայկական բոլոր հիմնարկությունները վերակառու-

ցել ժողովրդավարական սկզբունքներով, նպաստել հայ ժողովրդի լեզվի, գրականության ու մշակույթի զարգացմանը, ձգտել Կովկասի բոլոր ազգերի համագործակցությանը: Հայ ազատականները բավական աշխույժ գործունեություն ծավալեցին երկրամասում զեմստվային տեղական օրգաններ ունենալու համար՝ իրենց կողմից ևս պահանջելով Անդրկովկասում ինքնավարություն մտցնել: Ի վերջո, ինչպես զեմստվային ինքնավարության, այնպես էլ մյուս բոլոր չափավոր պահանջները մերժվեցին՝ հանդիպելով ցարական բյուրոկրատիայի պատնեշին:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Անդրկովկասի քաղաքներում գործում էին դեռևս 1902 թ. նարոդնիկական սկզբունքներով կազմավորված սոցիալիստ-հեղափոխական Էսէռական կուսակցության ներկայացուցիչներ: Նրանք ժողովրդական ընդհանուր ցասման գյուղացիական թևի մարտական ներկայացուցիչներ էին և միաժամանակ որոշակի համակրանք էին տածում հայկական ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: Եվ պատահական չէ, որ 1907 թ. հունիսին Բաքվում ստեղծվում է «Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայ կազմակերպությունը»: Կուսակցության մեջ ղեկավար դեր էին ստանձնել նախկին «երիտասարդ դաշնակցականներ» Լևոն Աթաբեկյանը և Արսեն Ամիրյանը: Հայ Էսէռների ղեկավար կազմում էին նաև Վ. Մինախորյանը, Վ. Խոռխոռունին, Գ. Մելիք-Շահնազարյանը, Գ. Բազազ-Աղաջանյանը, Բյուզանդը և ուրիշներ: Էսէռական կուսակցությունը Բաքվից և Թիֆլիսից բացի, իր ներկայացուցիչներն ուներ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում:

Ռուսական առաջին հեղափոխության կարևորագույն նվաճումներից էր ժողովրդին խոստացված օրենսդրական խորհրդարան՝ Պետական դումա ունենալու իրավունքը: 1906 թ. գարնանը երկրում նշանակվեցին Առաջին պետական դումայի ընտրությունները: Անդրկովկասի հայության կողմից Դումայի պատգամավորներ ընտրվեցին Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Գ. Տեր-Պետրոսյանը, իրավաբան Լ. Թումանյանը, Թիֆլիսի նահանգի կողմից՝ բժիշկ Ա. Այվազյանը, Գանձակի բնակչության կողմից՝ բժիշկ Բ. Բահաթրյանցը: Դումայի բացման նախօրյակին՝ 1906 թ. ապրիլի 29-ին, հրաժարական տվեց նրա հրավիրման նախաձեռնողը՝ թագավորի ձևական հակակրանքին արժանացած, բարենորոգչական որոշակի հակումներ դրսևորող, նախարարների խորհրդի նախագահ Ս. Վիտտեն: Մասնակցելով Դումայի գործունեությանը, թեր ու դեմ կարծիքներ հայտնելով երկրի դրությանը վերաբերող ընդհանուր խնդիրների շուրջը՝ Անդրկովկասի հայ պատգամավորները 1906 թ. հունիսի 12-ին հատուկ հարցապնդում արեցին հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ կովկասյան իշխանությունների բռնած դիրքի, նրանց օրինազանցությունների և սադրիչ գործունեության ու ապիկարության մասին: Հարցապնդումը պաշտպանության արժանացավ ադրբեջանցի, վրաց և ազատական տրամադրություններ արտահայտող որոշ ռուս պատգամավորների կողմից: Մասնավորապես ռուս պատգամավորներից մեկն իր ելույթում այն միտքը հայտնեց, որ կովկասյան ազգություններին իրար դեմ գրգռելու և ընդհարումներ առաջացնելու ճանապարհով հետադիմությունը ձգտում է արյու-

նաքամ անելով թուլացնել նրանց՝ ռուսացնելու, գիմահեղման ենթարկելու համար[7]:

Բավականին պերճախոս փաստեր հրապարակվեցին կառավարության կենտրոնական և տեղական ներկայացուցիչների զայրացուցիչ վարքագծի մասին: Պատգամավոր Բ. Բահաթրյանցը, կառավարությանը համեմատելով «անշնորհքության բազմագլխանի հիդրայի» հետ, պահանջեց հեռացնել ժողովրդին բարիք չցանկացող մարդկանց՝: Դումայում կառավարության ներքին քաղաքականությունը մերկացնող սենսացիոն նյութով հանդես եկավ ներքին գործերի նախարարի նախկին տեղակալ իշխան Վ. Ուրուսովը: Նա հայտարարեց, որ սևհարյուրակային-ջարդարարական կազմակերպությունները, որոնցով հեղեղված է երկիրը, գործում են պետական բարձրաստիճան պաշտոնյաների ուղղակի ղեկավարությամբ, որոնք Ռուսաստանում տեղի ունեցող ամբողջ խառնակությունների պատճառը համարում են լեհերին, հայերին, հրեաներին[9]: *Դումայի նիստերի ժամանակ գյուղացիական շահերի պաշտպանության օգտին հանդես եկող ռուս պատգամավորներն այնպիսի խիստ-ելույթներ ունեցան, որ ի վերջո, Նիկոլայ II-ը հրաման տվեց կառավարիչ սենատին Պետական դուման արձակելու և նոր Դումա հրավիրելու մասին՝ գումարման ժամկետ նշանակելով 1907 թ. փետրվարի 20-ը:*

1907 թ. հունվարից սկսվեց Երկրորդ պետական դումայի ընտրությունների կամպանիան, որն ավարտվեց փետրվարի սկզբներին: Ի տարբերություն Առաջին պետական դումայի, Դաշնակցությունը որոշեց Երկրորդին ակտիվորեն մասնակցել, գտնելով, որ հետհեղափոխական ժամանակաշրջանում այնտեղ հայությանը վերաբերող կենսական բազում հարցեր են արծարծվելու: Երևանի նահանգից Երկրորդ դումայի պատգամավորներ ընտրվեցին դաշնակցականներ Հ. Սաղաթելյանը ու Ս. Տիգրանյանը, Գանձակի նահանգից՝ Ա. Տեր-Ավետիքյանը: Կարսի մարզում ընտրվեց անկուսակցական Հ. Աթաբեկյանը: Թիֆլիսի պատգամավորների մեջ էր սոցիալ-դեմոկրատ, փոքրամասնական Արշակ Զուրաբյանը: Երկրորդ դուման բացվեց 1907 թ. փետրվարի 20-ին: Ինչպես Առաջին, այնպես էլ Երկրորդ պետական դումայի գործունեության մեջ գլխավորը ադրարային-դյուղացիական հարցի արծարծումն էր: Քննարկվող առաջին հարցերից մեկը նաև զեմստվային ինքնավարություն մտցնելու խնդիրն էր, որի նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցրին ռուս սահմանադիր-ռամկավարները (կադետները), որոնց անմիջապես միացավ Հովսեփ Աթաբեկյանը: Ունենալով կադետ պատգամավորների աջակցությունը՝ վերջինս բարձրացրեց նաև Կարս քաղաքում տեղական ինքնավարության խնդիրը: Դումայի նիստերում, նրա հանձնաժողովներում տնտեսական, ազգային-մշակութային, ռազմադաշտային դատարանները վերացնելու, պարտադիր ուսուցում մտցնելու, բյուջեի, ագրարային և այլ հարցերի շուրջը ելույթներ ունեցան նաև Հ. Սաղաթելյանը, Ս. Տիգրանյանը, Ա. Տեր-Ավետիքյանը:

---

[7] Государственная дума первого созыва. Стенографические отчеты, сессия I, II, п. с. 1228-1230.

[8] *Նույն տեղում, էջ 1231-1236:*

[9] "Первая государственная дума", II, 1907, ст. 51—54.

Անդրկովկասի պատգամավորներից մի քանի անգամ մարտական ելույթներ ունեցավ Ա. Զուրաբյանը: Առաջին անգամ նա դումայում հանդես եկավ մարտի 27-ին բյուջեի հոդվածների քննարկման հարցերի կապակցությամբ: Ապրիլի 16-ին էլ Դումայի փակ նիստում միացյալ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից փայլուն ելույթ ունեցավ այս անգամ բանակում տիրող ծանր դրության, մասնավորապես սպաների դաժանության և զինվորների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մասին: Ա. Զուրաբյանի հաջորդ խիստ ելույթը 1907 թ. մայիսի 24-ին Կովկասի կապակցությամբ առաջացած հարցադրման ժամանակ էր, երբ խոսեց Արևմտյան Վրաստանի գյուղերում կազակային էքսպեդիցիաների կատարած բռնությունների մասին: Անցնելով հայկական գյուղերի վիճակի հարցին, ընթերցեց Գանձակի նահանգում հաշտարար միջնորդ Երմոլաևի, գավառապետ Ֆրեյլիխի, ենթագնդապետ Վեվերնի գլխավորությամբ գործող կազակային զորամասերի կատարած վայրագությունների և քստմնելի դեպքերի նկարագրություններով լի հեռագրերը:

Ցրելով Առաջին դուման կառավարությանը հնազանդ չլինելու համար, ցարը սխալվեց, որովհետև Երկրորդն իր կազմով ավելի ձախ դուրս եկավ: Դա ցույց տվեց, որ հեղափոխությունը թեպետև նահանջում էր, սակայն ժողովրդի քաղաքական-գիտակցական մակարդակն աճում էր: Նիկոլայ II-ը որոշեց ցրել նաև այս Դուման: 1907 թ. հունիսի 1-ին կառավարության ղեկավար Պ. Ստոլիպինը դումայի փակ նիստում պահանջեց անմիջապես արտաքսել սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի բոլոր 65 անդամներին և ստահոգ մեղադրանք ներկայացնելով «պետական դավաճանության» մեջ նրանց բանտարկել տվեց: Հունիսի 3-ին օրենք հրապարակվեց Պետական դուման ցրելու և Երրորդ դումա հրավիրելու մասին: Նոր օրենքով բանվորների և գյուղացիների ընտրական իրավունքները խիստ սահմանափակվեցին: Դրանով իսկ Ստոլիպինը պետական հեղաշրջում կատարեց, որովհետև կառավարությունը խախտելով Դումայի օրենսդիր իրավունքը՝ օրենք հրապարակեց առանց նրա գիտության:

Հունիսերեքյան հեղաշրջումով ավարտվեց 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությունը:

1905–1907 թթ. ռուսաստանյան հեղափոխական կուսակցությունների գործունեության համար յուրատեսակ քննության ժամանակաշրջան դարձան: Այդ տարիներին սոցիալիստ-հեղափոխականները, սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մեծամասնական թևի ներկայացուցիչները բանվորական շարժումները, գյուղացիական ելույթները, զինվորական հուզումները նպատակաուղղում էին հարձակողական գործողությունների ապստամբության, պետական մեքենան ջախջախելու, արմատական հեղափոխություն կատարելու համար: Նման ռազմավարության կողմնակից էին նաև մի շարք հայ մեծամասնականներ, այդ թվում Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը: Եվ իզուր չէ, որ 1905 թ. Մոսկվայի բանվորների դեկտեմբերյան ապստամբությունը հաղթանակի հասցնելու լենինյան պատգամները հոգեհարազատ էին նրանց: Սոցիալ-դեմոկրատական կուսակցության փոքրամասնական թևի ղեկավարները և մանավանդ նրանց պարագլուխ Գ. Պլեխանովը դեմ էին ապստամբությանը, գտնելով,

որ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի ընձեռած հնարավորության պայմաններում հեղափոխությունն աստիճանաբար կարող է հաղթել՝ խուսափելով արյունահեղությունից: Այս հարցի մասին խորհում էին ոչ միայն փոքրամասնականները, այլև մեծամասնական կոհորտայի այնպիսի ականավոր ներկայացուցիչ, ինչպիսին Բոգդան Կնունյանցն էր: 1905 թ. նոյեմբերին "Новая жизнь" *թերթում «Բանվորների դեպուտատների սովե՞տը, թե՞ կուսակցությունը» հոդվածում նա քաղաքականության մեջ գերակայությունը տալիս էր սովետներին: Հեղափոխության մեջ կուսակցության դեկավար դերի խնդիրը Կնունյանցը քննում է նաև 1911 թ.* "Новая жизнь" *թերթում հրապարակած «Հանրագումարներից մեկը» և «Հինը և Նորը» հոդվածներում, որոնցում արգեն կասկածի տակ է դնում կուսակցության ավանգարդային դերի հարցը գալիք հեղափոխության մեջ, այսինքն՝ հարում է լիկվիդատորությանը: Հայտնի է, որ ՌՍԴԲ կուսակցության պատմության մեջ լիկվիդատորությունը մի ուղղություն էր, որի սխալ լինելը չապացուցվեց խորհրդային պետության տասնամյակների ընթացքում: Եվ, ընդհակառակը, պատմական իրադարձությունների վերաիմաստավորման արդի ժամանակներն ապացուցեցին Բոգդան Կնունյանցի նման նշանավոր անհատականությունների իրատես և հեռատես լինելը:*

ВОСТОЧНАЯ АРМЕНИЯ В РУСЛЕ ПЕРВОЙ РУССКОЙ РЕВОЛЮЦИИ

ДЕРЕНИК МУРАДЯН.

Резюме

Расстрел мирного шествия петербургских рабочих 9 января 1905 г. стал началом первой русской революции. Революционное движение, начавшееся в столице, постепенно охватило всю страну, в том числе и Закавказье. В революционном движении в крае помимо социал-демократов, игравших главную роль, принимали участие также армянские национально-демократические партии "Дашнакцутюн" и "Гнчак". Разумеется, их главной целью оставался вопрос освобождения западных армян. В марте-апреле 1905 г. с петициями к правительству обратилась закавказская армянская либеральная интеллигенция с требованием коренных преобразований в стране, а также открытия закрытых прежде армянских школ и возвращения имущества апостольской церкви, конфискованного в 1903 г. Под натиском революционного народа Николай II 17 октября 1905 г. издал манифест о даровании политических свобод и о созыве законодательной Думы. Чтобы отвлечь внимание народных масс Закавказья, правительство в 1905 г. организовало провокационные армяно-азербайджанские (татарские) столкновения. 6 февраля азербайджанские бандформирования в Баку внезапно напали на мирных армян, убив несколько сот человек. Столкновения во всем Закавказье продолжались полтора года. Постепенно были ор-

ганизованы армянские отряды самообороны, которые нанесли азербайджанской стороне ощутимые потери, намного превышающие потери армян. В 1906–1907 гг. армянская общественность принимала участие в выборах в Первую и Вторую Государственную думы, где армянские политические деятели выступали с критическими заявлениями в адрес правительства. На заседаниях Второй думы с разоблачением антинародной деятельности правительства с резкой критикой выступали представители революционных организаций России. Серьезно обеспокоенный настроением депутатов, премьер-министр П. Столыпин 3 июня 1907 г. разогнал Думу. Разгоном Думы завершилась Первая русская революция.